

ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱԶԱՆՅԱՆ

ՀՈՒՅԶԵՐԻ ՀԵՂԵՂ

(բանաստեղծություններ)

ԵՐԵՎԱՆ



**ԱՐՄԱՎ
2013**

ՀՏԳ 891.981 - 1 Աղաջանյան

ԳՄԴ 84 Հ - 5

Ա 458

Հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում **Արթուր Աղաջանյանին**, գրքի հրատարակչական ծախսերը հոգալու համար:

Հեղինակը գիրքը սիրով նվիրում է նրան...

Աղաջանյան Լուսինե

Ա 458

Հույզերի հեղեղ: Բանաստեղծություններ / Լ. Աղաջանյան. - Եր.: Արմավ հրատ., 2013. - 68 էջ:

Գրականությունը ինձ համար միջոց է ազատ լինելու, միջոց է նաև հույզերս ու ապրումներս բառերի միջոցով դուրս հանելու: Որքան հարմար ու դիպուկ բառեր, պատկերներ եմ գտնում, այնքան ես անկեղծ եմ, այնքան գործս հաջող է: Գրականության մեջ ես ժամանակ չունեմ երկինք նայելու. ես նայում եմ ինձանից ներս, որ ուրիշների մեջ կարողանամ թափանցել: Ինձ համար տիեզերք է մարդը. իմ սիրո, խղճահարության, զարմանքի, հիացմունքի օբյեկտը, մեկը, ով ինձանից ներս է ու ինձանից դուրս, ինձ նման ու ինձանից տարբեր՝ հասկանալու ու չհասկանալու աստիճան: Իմ բանաստեղծությունները ժամանակակից կնոջ ապրումների ու կապանքների, սիրո ու խենթ զգացողությունների մասին են խոսում:

ՀՏԳ 891.981 - 1 Աղաջանյան

ԳՄԴ 84 Հ - 5

ISBN 978 - 9939 - 9089 - 0 - 8

© Աղաջանյան Լուսինե, 2013

© Արմավ, 2013

Քո ճակատի հորիզոնից այն կողմ,
Քո աչքերի օվկիաններից անդին,
Չեփյուռդ գաղտնի, մի բացահայտ հողմ,
Ավերդ անտես, ավարդ հայտնի:

Մտքիդ ծովից այն կողմ մի փակ կղզի,
Այնպես խորհրդավոր ձգո՛ւմ ես քեզ,
Միրո նման թա՛նկ, անհասկանալի,
Թույլ տուր բացեմ քո գաղտնիքը ես:

Մերդ, ինչպես խեցու մեջ մարգարիտ,
Ինչպե՞ս ձեռքս առնեմ առանց սուզվել,
Ծովդ փոթորկո՛ւմ, փրփուրն երեսիդ,
Վախենում եմ անգամ մոտիկ վազել:

Մտքիդ տիեզերքում ինձ ա՛ն անցիր,
Իբրև մաքուր ու ջինջ ամպ մի լուսե,
Ընդլայնվում է մեր տիեզերքն անծիր,
Մի օր մտքիդ կենտրոնում կլինեմ...

Քո հորիզոնից այն կողմ մի ճակատ,
Օվկիաններիցդ անդին խո՛ր աչքեր,
Ամո՛ր, ինչպես պապենական հավատ,
Քա՛ղցր, ինչպես ամեն մի անհաս սեր...

26. 06. 2012 թ.

ՔԵԶ...

Միրո՛ւմ եմ կարողալ... բա՛ց սրտիդ մի էջ,
Ուր գրված խոսքը գիր է քանդակված,
Մտքերի հոսքը սակայն չունի վերջ,
Ամեն մի բառը կյանք է ապրված...
Քո սրտի գիրը նաև շառաչ է,
Միրո աղբյուրի քաղցր մեղեդի,
Մեկ-մեկ ընդհատվող տխուր հառաչ է,
Ականջից հեռու, աչքերից գաղտնի:
Եթե գրագիր դառնամ ես հմուտ,
Խոսքիցդ գրիչս դողա, ինձ հուզի,
Տաղեր դարձրած մի իրիկնամուտ,
Ծովափին կերգեմ՝ նստած ավազին:
Մեղեդին քնքուշ ես ճային կտամ,
Նա գիտի ինչպես փոխանցել հոգին,
Մինչ արևամուտ նստած կմնամ,
Որ երգս սրտիդ հասնի այն ափին:
Ճի՛շտ եմ հասկացել, հավանեցի՛ր դու,
Գիտեմ անծանոթ հնչյուններ էլ կան,
Իմ սրտի ձայնն է նրանց հետ ձուլվել,
Միրո՞ւն է լսիր նրանց հարմոնիան:
Երգն իմ սրտիդ մեջ գրեցիր թաքուն,
Քո արձագանքն ինձ հովի հետ եկավ,
Հոգու մեղեդին թե ի՛նձ է հայտնի,
Մրտերեն լեզո՛ւն քեզ հայտնի՛ է լավ:

13-18. 05. 2012 թ.

Կուգեմ բոկոտն դաշտերը վազեմ,
Առանց հանգստի ցանեմ հիացմունք,
Ձեռքերով հողը փխրեցնեմ, շոյեմ,
Դ-աշտն արտաշնչի ծաղիկի բուրմունք:

Բույրի փնջերը ես գիրկս առած,
Սար ու ձոր անցնեմ, որ սիրուց վայրի,
Որտեղ ոտք դնեմ, որտեղ օդ շնչեմ,
Կանաչ շոր հագնեն քար ու ամայի:

Կրքոտ կնոջ պես խաղերով աչքի,
Գ-այթակղեմ անշունչ կոճղերին անգամ,
Գ-ետերը ոտքեր առնեն ու վազեն,
Բլուրներն համեստ մեծ սարեր դառնան:

Ու չդադարեմ, անգուսպ, խելագար
Թ-ափել իմ սերը ճանապարհներին,
Ձեփյուռը գժվի կրքից այրված,
Պտտահողմ դառնա, գրկի մարմինն իմ:

Հևանք ու իրար փաթաթված թռնենք,
Վերև բարձրանանք, շպրտվենք հողին,
Քնատ արևն էլ մի բացառությամբ,
Կրակվի, փքվի ու ետ գա կրկին:

Խախտեմ բնության ողջ օրենքները՝
Ծաղկեն ու ճչան սիրո թարմություն,
Ես շաղ եմ տվել այնտեղ իմ սերը,
Ու քեզնից ծնված բանաստեղծություն:

Իսկ մայրամուտին միայնակ մի սար,
Փաթաթվեմ, գրկեմ՝ ոչ ոք չիմանա,
Երկինքը ասի՝ ինչպե՞ս բարձրացար,
Մարդիկ մտածեն՝ երկնքից ընկա...

27-28. 5. 2012 թ

Ես սուրճ եմ եփում, ձեռքս դողում է,
Երկու բաժակ սուրճ՝ ինձ ու քեզ,
Դու եկել ես հյուր, ինձնից բուրում է
Մի վախկոտ բուրմունք շա՛տ համեստ:

Դու ակնարկում ես, թե անհաս եմ ես,
Ժպտում եմ, հոգիս արյուն է լալիս,
Թե իմանալիր՝ ո՛նց եմ տրվել քեզ,
Ու ինչպես ես ինձ սիրել երագիս:

Դու շատ ես խոսում՝ առանց բառերի, միայն աչքերով,
Խոսքիդ մեղեդին խենթանալու չափ ինձ դուր է գալիս,
Բայց երբ հիշում եմ, որ մեծ ես ինձնից տասնհինգ տարով,
Ուժ առած սերս դեմքիցս պոկում ու կուլ եմ տալիս:

Դու հասկանում ես, որ իմ կոկորդը սեղմվում է ցավից,
Ու զգում ես նաև, որ մենք հևում ենք միևնույն ռիթմով,
Սուրճը սառում է, քո հայացքն անթարթ զրկվում է հույսից,
Հանկարծ հիշել ես, որ փոքր եմ քեզնից տասնհինգ տարով:

Երբ ոտքի ելար, անտես սիրո լար
Կարծես ինձ ձգեց, ես ա՛խ քաշեցի,
Մի թեթև ժպիտ ու դու չիմացար,
Որ դա արցունք էր չորացած լացի:

Գուցե անորոշ այս հանդիպումը ծանոթ թվաց ձեզ,
Գուցե անպաճույճ, կամ անիրական,
Բայց հավատացեք՝ երբեք իմ սուրճը չէր բուրել այդպես,
Չեմ կարողանա նույն սուրճը եփել ես երկրորդ անգամ:

4-5. 06. 2012 թ.

*Նվիրում եմ «Տղամարդիկ» ֆիլմին
Ու բոլոր նրանց, ովքեր իրենց տեսել են
այդ ֆիլմի մեջ...*

Իմ պատուհանից պարզ երևում էր քո պատշգամբը,
Երեկոյան լույսն ինձ հույսի փոքրիկ նշույլ էր տալիս,
Ես թաքուն, անտես քեզ հետ կիսում էի իմ երազանքը,
Բայց անձրևում էր մի տխուր թախիժ ու մեջս լալիս:

Ես հեռացնում էի ամեն պատնեշ, որ տեսնես հայացքս,
Միրո մեջ միամիտ, ես սիրո մեջ խա՛կ, սրտով՝ գյուղացի,
Անգամ անտեղյակ, բայց մեզ խանգարող բարի վազքը,
Ես հեռացնում էի ու իմ աչքերով գալիս քեզ այցի:

Թվում էր արդեն, թե լուսնի շողով մի ճուպան կապած,
Կտեսնեմ մոտ եկող, տունս մտնող սիրուետը քո,
Ա՛խ, ի՛նչ քաջություն ես կառնեմ վրաս, իմ անհա՛ս երազ,
Միայն աչքերով ինչպե՛ս կպատմեմ հեքիաթն իմ սիրո:

Բայց իմ աշխարհը խեղճացավ անգոր, մի տեսակ անելք,
Մերը, ափսոս մեզ ուժից գրկում է, վախկոտ դարձնում,
Ես քեզ սպասեցի՝ ինչպես երեխա, անփորձ ու անխելք,
Չգիտեի, որ համարձակներն են հարսանիք անում:

Չյուն չպիտի գար, սակայն ձյուն մաղեց աշխարհիս գլխին,
Ճերմակն այդ ուժգին ընդզծեց հոգուս ողջ սևությունը,
Ուրիշին տեսա, երբ երեկ նայի քո պատշգամբին,
Չյան հետ ավարտվեց երբեք չսկսված մեր պատմությունը:

6-7. 06. 2012թ.

ԵՐԿՐՈՐԳ ԿԵՆՍԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Իմ երազներում դու շատ համառ ես ու շատ համարձակ,
Հիմա կոստյումով, թանկ պարֆում բուրոդ ոմն պաշտոնյա:
Քո երազներում հեթանոս կնոջ նման եմ արձակ,
Հիմա՝ էլեգանտ, գլամուր ոճով հագնված դամա:

Պատահական չենք ընտրում մեր սրտի մարդուն, այլ նրան,
Ում կերպարն արդեն փայփայել ենք մեր մտքի ծայքերում,
Մենք հավանեցինք իրար հե՛նց սկզբից, աննախապայման,
Քանի որ վաղո՞ւց տեսնվել էինք մեր երազներում:

Յերեկն անխռով, ցերեկը մի գուսպ դիմակ կա դեմքիս,
Դո՛ւ էլ լավ գիտես ցերեկը շրջել դիմակով խաղաղ,
Բայց դիմակիս տակ ձեռքեր է առել կարծես թե ոգիս,
Օձիքդ հավաքել ու թա՛փ է տալիս իշխող ու անվախ:

Ինձ համար պարզ է, հասկանում եմ, որ երազները մեր,
Բեմադրում ենք մեր ուղեղներում՝ սցենարով սրտի,
Գիշերը հեշտ է, բեմ ենք բարձրանում առանց հրավեր,
Բայց ցերեկն օտար կողք-կողքով անցնում քաղաքավարի:

Հայացքումդ լուռ մի օր երազիդ տեքստը կարդացի,
Հասկացար, որ նույն ներկայացումը տեսել եմ ես էլ:
Ինձ երազել ես առանց շլապա, առանց ակնոցի,
Առանց կոստյումի, առանց փողկապի քեզ եմ երազել:

Այնպես ճնշող ենք ցերեկը զգում հանդիսատեսին,
Ուստի խաղը մեր կտրուկ փոխում է իր լրջությունը,
Աչքով արեցիր, ժամադրվեցինք, նայեցինք լուսնին,
Բողոքից անտես երազո՞ւմ կանենք մեր խենթությունը:

Հենց այնպես երազ չի տեսնում ոչ ոք, ինքնաբերաբար,
Խորը քնի մեջ շատ հմայիչ է ազատությունը,
Արի՛ մի քի՛չ էլ երազում ապրենք ու հետևաբար,
Արի՛ հանդիպենք այնտեղ նո՛ւյն ժամին ու անենք նո՛ւյնը:

16. 06. 2012 թ.

Երբ ես չեմ խոսի՝ ուշադիր լսիր իմ լռությունը,
Հետո շփվելու համար եմ խոսում լեզվով այդ օտար,
Դա սովորեցի, երբ երկար ձգվեց համբերությունդ,
«Երկմտանք» կոչել կլիներ նրան ավելի հարմար:

Արդեն այնպե՛ս եմ զգում այդ լեզվի ողջ նյութանները,
Ճարտարախոսում ապրումներիցս՝ առանց ակցենտի,
Այնքան արտիստիկ, այնքան խոսուն եմ մանրամասները,
Կարծես Պիկատոն ինձ է պատկերել շուրջը արսենտի:

Ինձ պատասխանելու համա՞ր լռեցիր... Շատ իզո՞ր,
Այնքան անվա՛րժ ես, աչքդ անընդհատ բառարաններից,
Իմ միտքը հստակ, իմ միտքը դիպո՞ւկ ու իմ միտքը սո՞ր,
Լռության լեզուն դարձավ հարագա՛տ, դարձա՛վ մայրենի:

Իմաստունները իզո՞ր են ասել, թե ոսկի է այն,
Լռությո՞ւնը սին, խնդրեմ կարող եք ինքներդ դատել.
Ոսկին այդ արա՛գ գնում է դեպի արժեքագրկման,
Երբ նո՛ւյն ժամանակ բոլորն են հանկարծ որոշում լռել...

18. 06. 2012 թ.

Երբ մի օր ծերանամ ու պառավեմ մի օր,
Դուռս ամուր փակեմ, մենակ մնալ ուզեմ,
Մեր երգն հիշեմ, ռոմանսն հասակավոր,
Կարոտով երգեմ, որ մի քիչ ես ինձ հուզեմ...

Չայնս պատկերներն է աչքիս առաջ բերում,
Տեսարանը սիրո՝ անավարտ ու ցավոտ,
Միտքս, սակայն, միայն արդյունքներն է հաշվում,
Հետ գնում հայացքս վախժխելով, ոտ-ոտ:

Երիտասարդ էի երբ ես, դու էլ ջահել, սիրուն,
Կյանքն անվերջ էր թվում, մենք վստահ մեր ուժին,
Ծաղկառատ չէ, սակայն, ամեն բացվող գարուն,
Գարունը չի տալիս ծաղկել ամեն մեկին:

Ամեն ինչ անցավ, բայց երգն անմոռանալի,
Անդավաճան ինձ հետ ապրում է միայն նա,
Ահա՛ ինչո՛ւ կուզեմ երգել պառավ հալիս,
Երբ դուռս փակեմ ու երբ մենակ մնամ...

Ա՛խ չկա՛ս ոչ մի տեղ, միայն այդ ռոմանսում,
Շոշավում եմ քեզ լո՛ւկ սիրո երգում այդ հին,
Տաղանդավոր երգն այդ ինչպե՛ս էինք լսում,
Ինչ անտաղա՛նդ ենք, սակայն, երգում առանձին...

Ամուսնացար միայն հիշողությանս հետ,
Երգն այս անգամ է կարծես անխախտ երդման պես,
Դե ապրի՛ր հավատարիմ հուշերումս գեթ,
Այնքան, մինչև իմ մահը կբաժանի՛ ձեզ...

26. 06. 2012 թ.

Հոգու երկինքը թույլ է տալիս լայն,
Բացել թևերը թռիչքի սիրո,
Հայացքիցս սև ամպն է սպիտակում,
Մաղմուս է երգում ճայթյուն ու որոտ:

Ճախրանքս ազդու այրում է ոմանց,
Շատերն են ուզում թռիչք համարձակ,
Տարիներ պահված ապրումները զուսպ,
Չեն մնում գաղտնի, դառնում են փափագ:

Թիթեռներն անգամ մեկ օրվա կյանքի
Չևը փոխում են ազդված ինձանից,
Գործերը անում թրթռ՛ւր ժամանակ,
Որ կյա՛նք վայելեն թիթեռ տարիքից:

Ու թիթեռության ողջ հմայքով մեկ,
Իրենց գլխից վեր ճախրե՛լ են ուզում,
Ասեղնագործված, ժանյակե թևով
Արծվի մի խրոխտ ընթացք քարոզում:

Հույսի շողերի քաջալերանքից
Ես սլանում եմ վստահ, ժպտերե՛ս,
Այսպես ճախրում եմ քո մի՛ հայացքից,
Երկի՛նք կճեղքեմ, եթե ինձ սիրես:

01. 07. 2012 թ.

Ես, ինչպես գետն ամռան տապին, խաղաղ էի շատ,
Ջրի վրա միշտ շուշաններ, արևի խայտ:
Հատակումս լիքը տիղմ ու մամռոտ քարեր,
Երկինք նայող ու ժպտացող խոնավ աչքեր:

Ես գետ էի մի խաղաղ, հանդարտ մինչև գարուն,
Գեռ չգիտեի՝ ո՞նց են գժվում ու վարարում:
Մինչև որ դու սիրող ամպով ինձ թրջեցիր,
Որոտալով, մինչև հոգուս խորքը բացիր:

Էլ ո՞նց մնար գետս հանդարտ, առաջվա պես,
Վարարեցի ու ափիցս դուրս եկա ես:
Անցնող գարնան մման սիրուն, թո՛ղ, հեռացիր,
Մի հին խոսք կա՝ «մարմանդ գետից դու վախեցիր»:

Երբ ամառ գա, կրկին հանգիստ մի գետ դառնամ,
Ի՞նչ ես կարծում, սիրո՛ւս աղբյուր, կմռանա՞մ,
Ուշքս ու միտքս գարուն կուզի ու անպ քեզ պես:
Որ ջրերս երկինք հանի՝ ես փարվե՞մ քեզ:

Թե այս գարուն դու հեռանաս գետիս կողքից,
Ինչպե՞ս գալե՞մ փոթորիկս սրտիս խորքի,
Կուզես ուրիշ գետե՞ր թրջել, որ վարարեն,
Ուրիշ ամպից չե՞մ խռովի, գժվի նորեն:

Լավ է ջուրս տամ արևին ու չորանամ,
Գետս շուտով ցամաք դառնա ու վերանամ:
Միայն ափսոս, որ չի լինի մի գետ հանդարտ,
Ջրիս վրա բացված շուշա՞ն, արևի խայտ...

22. 06. 2012 թ.

Դու կրակոտ հեթանո՛ս, ես քրիստոնյա մի թերի,
Մորթվող ոչխարի նման, ինձ քո դուռը գոհ բերիր...
Ապրումներս գալարվող՝ շուրթիցս ելած մայում,
Դու մի կախարդ, դու մի մոգ, ինձ ես նայում, հմայում...

Վահագնիցդ մի մասնիկ, Միհրիցդ երկուսն առած,
Արև դառած այրո՛ւմ ես, դու իմ սիրո գառնարած...
Դու իմ կողքին Արամազդ, ես Աստղիկ չեմ, ի՛նչ արած,
Այրոցը սիրտս է ընկել, ես քրիստոնյա՝ շվարած...

Վայրի գազանի կողքին ես արնոտ, ես պատառված,
Էլ չե՛մ մայում գառան պես, ներսիս գա՛յլն է գազազած...
Աստվածներդ հզո՛ր չեն, թող ի՛նչ Աստվածն ինձ ների,
Դու հեթանո՛ս տիրական, ես քրիստոնյա մի գերի...

28. 06. 2011 թ.

Քարանձավ լիներ, երկա՛ր կյանք լիներ, օրերն անհամա՛ր,
Անդո՛ւտ տուն լիներ, պատերը անտա՛շ, մի ծուռտիկ կամար,
Ճամփի՛դ նայեի, աչքս պա՛րզ տեսներ անդին սարերից,
Ջե՛րմ արևի պես հեռու լինեի՛նք հոգսից ու ցավից:

Որսորդի նման, աժդահա ու մեծ տունս մտնեիր,
Մրգերն անլվա, ծառա կնոջ պես գոգդ լցնեի,
Դու, տիրոջ նման, ինձ անտառ տանեիր միշտ մայրամուտին,
Հպարտանայի բազկիդ շնորհով այդ օրն էլ կրկին:

Արևը հանգեր, երբ լուսինը գար, հենց այդ ժամանակ,
Հագուստս պատռեիր մեծ իշխանությամբ՝ կուպիտ ու անհագ,
Հետո առյուծխեղդ մարդու գործությամբ ինձ գետի՛ն փռեիր,
Բայց եղմիկ գտած որսորդի պես նուրբ փարվեի՛ր ու սիրեի՛ր:

Կուսական հողը, երբ լավ թրջվեր մեր սիրո խաղից,
Ձարթնող ծառերը խենթանային անգուսպ տերևի պարից,
Իրար մեջ մտած ճչային մեզ պես՝ խենթ սիրուց վայրի,
Լուսինն էլ արև ամուսնուց ուզեր, որ իրեն այրի...

Բայց քարանձավ չէ, զարդանախշվա՛ծ է իմ տուն-ամրոցը,
Ատլասից շքեղ գոգնո՛ց է սիրում իմ խոհանոցը,
Ծառս եղած մտքիցս վայրի ձիու պես սի՛րտս թպրտաց,
Երագն ավարտվե՛ց, իմ ճաշի բույրով ուրի՛շն է արբած...

06. 07. 2011 թ.

Կեսօրին այնպես վախեցնող թվաց բո՛րք մայրամուտը,
Բայց գիշերվա մեջ արևածագը՝ ցնծության պատճառ:
Թեև հոգունս փակել եմ «ես»-ի իմ լուսամուտը,
Բայց դեմքիս վրա ճառագայթում է ներսիս լույսը վառ:

Կուգեմ քո սիրո շողը խնայել, պահել քեզ համար,
Փակե՛լ փայլերի անգուսպ ճառագման լուսաշող ճամփան,
Որ ի՛նքդ էլ փարվես տվածդ սիրո ջերմությանն անմար,
Որ արև եղար գիշերումս մութ, թանկ կյանքի նման:

Բայց այս անհնար ցանկությունն իմ մեջ զսպել չի՛ լինում,
Կամքիցս անկախ հմա՛յք եմ շաղում, ժպտո՛ւմ բոլորին,
Մարդիկ տաք ձայնիս ելևէջներում քե՛զ եմ նկատում,
Աչքերիս մեջ էլ ականջ եմ դնում քո սիրո երգին:

Դե՛ն եմ կեսօրվա անարև ու մութ մայրամուտներին,
Բայց հավանո՛ւմ եմ արևածագին՝ գիշերվա մեջ խոր,
Հայտնությունդ հոգուս ամուր, փակ լուսամուտներին,
Վարագո՛ւյր եղավ՝ կյանքի նման թանկ, հարության պես նոր:

09. 07. 2012 թ.

Դու հեռանում ես, շա՛տ լավ, հեռացիր,
Բայց տար քո թողած բոլո՛ր հետքերը,
Ջերմությունը, որ սրտիս մեջ թողիր,
Հուշախեղդ եղած տխուր աչքերս:

Իմ ձեռքերի մեջ շփումը ձեռքիդ,
Ու աչքերիս մեջ սիրուդ փայլը վառ,
Երակներիս մեջ սարսուռը հեքիդ,
Թե հեռանում ես, դա՛ էլ հետդ տար:

Թողել ես նաև համբույրդ կրքոտ,
Իմ շրթունքներին դաջվածքի նման,
Կարծես կնի՛ք ես դրել, որ սպասեմ,
Երդման խոսքի տակ՝ կվերադառնամ:

Արյուն գալու չափ դժվար էլ լինի,
Պոկի՛ր համբույրիդ արմատներն ամուր,
Որ մինչև սի՛րտս են հասնում ծակոցով,
Մայրամուտին, երբ քե՛զ են հիշում զուր:

Դու տա՛ր ամեն ինչ, միայն խնդրո՛ւմ եմ,
Ի՛նձ թողնես մնա այն հրաշք մուսան,
Որով շնչո՛ւմ էիր պոեզիայիս մեջ,
Ու գրկո՛ւմ էիր ինձ, երբ կարդում էի այն:

Դու հեռանում ես, շա՛տ լավ հեռացիր:
Տա՛ր քո հետքերը՝ չմնա՛ն ինձ մոտ,
Թող միայն մուսա՛ն իմ կողքին մնա,
Որ գի՛րկդ հիշեմ՝ տա՛ք, ներշնչանքո՛ւտ...

5-10. 07. 2012 թ.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Քո ճակատի հորիզոնից	3	Դու անվախ ես	35
Քեզ... ..	4	Կրկին քեզ տեսա	36
Կուզեմ բոկոտն	5	Դու ուզում ես, որ ես սիրեմ	37
Ես սուրճ եմ եփում	6	Քեզ երկնքից նայեմ	38
Իմ պատուհանից պարզ երևում էր	7	Անձրևից հետո, լույ յոթ գույներ են	39
ԵՐԿՐՈՐԴ- ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ	8	Ես քիչ եմ ապրել	40
Երբ ես չեմ խոսի	9	Արշալույսներս քացվում են	41
Երբ մի օր ծեփանամ	10	Ինչպե՞ս քաքցեմ քեզ	42
Հոգուս երկինքը	11	Երկնքի թացն է քիչ-քիչ չորանում	43
Ես, ինչպես գետն ամռան տապին	12	Այսօր հիշեցի	44
Դու կրակոտ հեթանոս	13	ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԴԵՈ... ..	45
Քարանձավ լիներ	14	Դու համբուրեցի՞ր ու թարտացին	46
Կեսօրին այնպես վախեցնող	15	Ո՞վ է մեղավորն	47
Դու հեռանո՞ւմ ես	16	Ես մոտենում եմ մեր հին ռոյալին	48
Իմ ննջարանում լուսամփոփ ունեմ	17	Իմ հավատի տապանի մեջ	49
Ես գարեջր եմ սեղանին դնում	18	Չգիտեմ արդեն ի՞նչ ուզեմ կյանքից	50
Դու ամեն գիշեր	19	Կյանքիս տարիքից մեծացա	51
Այսօր հոգուս մեջ	20	«ՍՐՏԱԾԱՂԻԿՆԵՐ» ՇԱՐՔԻՅ	52
Հոգուս գնացքով	21	Դու աշխարհի հոգան իմ	54
Ես ինչպե՞ս անեմ	22	ԼՈՒՄՆԱՅԻՆ ԳԳՆԱԺԱՄ	56
Գարնան մի օրն իմը լինի	23	«ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԳԱՆԱԽՇԵՐ»	
Ես քեմ բարձրացա	24	ՇԱՐՔԻՅ	57
ՊԱՏԱՄԻԱՆ ՄԱՂԹԱՆՔ	25	ՄԻ ԹԱՅ ՄԻՐԱՎԵՊ	59
Սրտիդ թխած թարմ լավաշի	26	ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԻՆՁ... ..	60
Ես ինձ հաճախ եմ հարցնում	27	Ո՞ր եմ թաքնվել լացի քարերը	61
Երբ հանդիպեցիք, դու ասացիր	28	Երբ մի ծաղկով գարունը եկավ	62
ԽՈՌՎՔ... ..	29	Ես մի քիչ քեզնից գնացի	63
Թերթում եմ էջերն	30	ԳԻՐՔ ԾՆՆԳՈՅ ՄԻՐՈ	64
Երկնքի տակ եմ	31	ԲՈՂՈՔ ԺԱՄԱՆԱԿԻ	
Մտովի անցա	32	ԸՆԹԱՅՔԻ ԳԵՄ	65
Հիշո՞ւմ ես երբ մենք	33	ԻՄՄԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ	66
Տաղիս գալի՞քն ես	34		

**ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱԶԱՆՅԱՆ
ՀՈՒՅՉԵՐԻ ՀԵՂԵՂ**
(բանաստեղծություններ)

**ЛУСИНЕ АГАДЖАНЫН
ЛАВИНА СТРАСТЕЙ**
(стихи)

*Խմբագիր՝ Անդրանիկ Կարապետյան
Էջաղրուճիկ՝ Արմինե Քոչարյանի
Շապիկի շեփոխուճիկ՝ Լիլիթ Գևորգյանի
Օգտագործված են Օ. Ռենուարի նկարներից*

*Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսետ 80գ/մ²:
Ծավալը՝ 4.25 րպ. մամուլ:
Տպարանակը՝ 300:
Գինը պայմանագրային:*



«ԱՐՄԱՎ» հրատարակչություն